



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊՈՏԱԳԻՐ

N11,12 (73,74) հոկտեմբերի 21 – դեկտեմբերի 20

27 դեկտեմբերի 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորոշումներ.....	2
1.1 ՀՀ օրենքներ	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ	10
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ	17
2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ	20
2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....	20
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ	20
2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ	24

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորոշումներ

1.1 ՀՀ օրենքներ

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	23.10.2014թ, ՀՕ-152-Ն

Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 58 (1071), 29.10.2014թ
Ուժի մեջ է	08.11.2014

Համառոտնկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ **հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները** կամ ՀՀ օրենքների նման դրույթները կարող են գործողության մեջ դրվել այդ օրենքների **ընդունման տարվան հաջորդող \$ինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո՝ վեցերորդ ամսի 1-ից:**

Այն դեպքում, երբ հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքը չի ընդունվել մինչև ընթացիկ տարվա ավարտը, ապա հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կամ ՀՀ օրենքների նման դրույթները կարող են գործողության մեջ դրվել ՀՀ պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո՝ վեցերորդ ամսի 1-ից:

Հարկի դրույքաչափի բարձրացման և նոր հարկատեսակի սահմանման վերաբերյալ այս դրույթները չեն տարածվում տեղական հարկերի վրա:

Հարկի դրույքաչափի իջեցում, հարկատուների գործելու պայմանների մեղմացում, հարկի վերացում նախատեսող օրենքները կամ ՀՀ օրենքների նման դրույթները կարող են գործողության մեջ դրվել այդ օրենքների ընդունման տարվան հաջորդող \$ինանսական տարվա սկզբից, եթե այդ օրենքներով այլ ժամկետ սահմանված չէ:

Փաստաթուղթ	«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	02.12.2014թ, ՀՕ-155-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 67 (1080), 10.12.2014թ
Ուժի մեջ է	11.12.2014

Համառոտնկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ ապրանքների ձեռք բերելու **պարտադիր փաստաթղթավորման պահանջը չի տարածվում** օրենքն ուժի մեջ մտնելուց հետո **մինչև 2015 թվականի փետրվարի 1-ն** ընկած ժամանակահատվածում որևէ օրվա դրույթամբ առկա ապրանքային մնացորդի վրա, որի մասին հարկ վճարողները **մինչև 2015 թվականի փետրվարի 1-ը** իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևի տեղեկանք:

Սույն օրենքի գործողությունը տարածվում է **2014թ. հոկտեմբերի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա**

Փաստաթուղթ	«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	09.12.2014թ, ՀՕ-156-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (1082), 17.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Սույն օրենքով կարգավորում են ՀՀ կառավարության կողմից հաստատած ցանկում ներառված՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու հետ կապված հարաբերությունները:

1. Օրենքով սահմանված արտոնության համաձայն՝

1) այդ համայնքների վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը **մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից** եկամուտներն **ազատվում են շրջանառության հարկից**, իսկ այդ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող **անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից**.

2) տնտեսական գործունեության շրջանակներում **արտադրության** (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. **իրացումից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից,**

բ. **օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից,**

գ. **իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահույթահարկից կամ եկամտային հարկից.**

3) «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով **նախատեսված գործունեությունը**, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության, **ազատվում է արտոնագրային վճարից**, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից.

4) **կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են** ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով ՀՀ օրենքներով նախատեսված դեպքերում, **որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից**, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրության

ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալ ական վճարի:

II. Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով **վարում են եկամուտների և ծախսերի առանձնացված հաշվառում** (կազմակերպությունների համար՝ առանձնացված հաշվապահական հաշվառում), և իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) գծով գնորդների համար (ծառայությունների օգտվողների համար) **դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր**

III. Օրենքով պատասխանատվության մեխանիզմներ են նախատեսված սահմանամերձ գյուղական համայնքներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունն իրականացնող **չրջանառության հարկ վճարողի մոտ** «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում **ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտման**, ինչպես նաև **ավելացված արժեքի հարկ վճարողի կողմից** «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հավելվածով սահմանված կարգի խախտման (անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելը) դեպքերում կամ **չրջանառության հարկ վճարողի կողմից անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման դեպքերում**:

Փաստաթուղթ	«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի Օտոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	09.12.2014թ, ՀՕ-157-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 Կ(1082), 17.12.2014թ
ՌԲԺի մեջ է	18.12.2014

Համառոտ նկարագիր

Օրենքով արտոնությունն է սահմանվել 88 ապրանքային դիրքում ներառվող (թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր) ԱՏԳ ԱԱ 8804 00 000 ծածկագրին դասվող ապրանքատեսակների համար

(պարաշյուռներ և դրանց մասեր): Արտոնությունը սահմանվել է 5 տարի ժամկետով:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում և Լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	12.12.2014թ, ՀՕ-174-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (1082), 17.12.2014թ
Ուժի մեջ է	27.12.2014

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված Լրացման համաձայն **ԱՄՀ-ից ազատված** գործարքների և գործառնությունների թվին ավելացվել է նաև «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված **Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումների իրականացումը**: Միաժամանակ, նշված գործունեությունից ստացվող եկամուտները դիտվել են որպես նվազեցվող եկամուտներ՝ համաձայն «Եկամտային հարկի» ՀՀ օրենքում կատարված Լրացմանը:

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի» ՀՀ օրենքում և Լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	12.12.2014թ, ՀՕ-175-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (1082), 17.12.2014թ
Ուժի մեջ է	18.12.2014

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված Լրացման համաձայն, **նվազեցվող եկամուտներ** են համարվում «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված **Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումների իրականացնելու գործունեությունից ստացվող եկամուտները**:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» ՀՀ օրենքում և Լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.12.2014, ՀՕ-185-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացման համաձայն **2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը** (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների) դուրս են գրվում **բացառապես Էլ Եկտրոնային Եղանակով՝** ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հավելվածում (ՀՀ-ում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման կարգ) առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքի վարման պահանջը:

Օրենքում կատարված փոփոխության համաձայն տրվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված, **անփաստաթուղթ ապրանքի** համար նախատեսված **սուգանքը ձեռք բերող (նաև տեղափոխող և առաքող) հարկ վճարողի նկատմամբ չկիրառելու դրույթների նոր կարգավորումներ:**

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.12.2014, ՀՕ-186-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների համաձայն հանվել է ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային սահմանին **ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման համար կիրառվող՝ ներմուծման ծավալի նվազագույն շեմը** (200 մլ ն դրամը):

Կատարված փոփոխության համաձայն **2015թ. հունվարի 1-ից հարկային հաշիվները** դուրս են գրվել ու **բացառապես Էլ Եկտրոնային Եղանակով:**

Միաժամանակ սահմանվել է, որ գործարքը հարկային հաշվում նշված պայմաններով չկատարվելու, հարկային հաշվում նշված պայմանները փոփոխվելու դեպքում հարկային հաշիվ դուրս գրող և ստացող անձը հարկային հաշիվը անվավեր համարելու փոխարեն դուրս է գրում **ճշգրտող հարկային հաշիվ՝ ՀՀ կառավարության հաստատած կարգով: Ընդ որում, մինչև այդ կարգի հաստատումը շարունակվելու են կիրառվել հարկային հաշիվների անվավեր ճանաչման՝ ներկայումս կիրառվող ընթացակարգերը:**

Միաժամանակ, վերանայվել է նաև ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու (ԱԱՀ-ի հաշվարկված գումարները պակասեցնելու) համակարգը: Մասնավորապես, օրենքում կատարված լրացմամբ փոփոխվել է տարբերակով անցում է կատարվելու ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման հաշվեգրման մեթոդին: Այսպես, ԱԱՀ գծով հաշվանցումներ կատարելու համար ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ գումարները կարող են

հաշվանցվել նաև առանց մատակարարներին կամ ծառայություններ մատուցողների վճարում կատարելու՝

1. **2015թ. հունվարի 1-ից** այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված գործարքների **հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ) չի գերազանցել 100 մլն դրամը:**

2. **2016թ. հունվարի 1-ից** այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված գործարքների **հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ) չի գերազանցել 500 մլն դրամը:**

3. **2017թ. հունվարի 1-ից՝ բոլոր ԱԱՀ վճարողները:**

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.12.2014, ՀՕ-187-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	29.12.2014

Համառոտ նկարագիր

«Եկամտային հարկի մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքը լրացվել է նոր՝ 8.2-րդ հոդվածով, համաձայն որի իրականացվում է **վճարված եկամտային հարկի գումարներից բնակարանի ձեռքբերման նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից ստացված հիարթեքային վարկի սպասարկման համար վճարվող տկոսների գումարների վերադարձ:**

Փաստաթուղթ	«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.12.2014, ՀՕ-188-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունը պայմանավորված է ⑥Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին ⑦ ՀՀ օրենքի ընդունմամբ: Մասնավորապես, սույն օրենքով սահմանվել է, որ ⑥Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին ⑦ ՀՀ օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարից ազատված գործունեության մասով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին **արտոնագիրը սրամադրվում է առանց արտոնագրային վճարի վճարման:**

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
------------	--

Ամսաթիվը և համարը	13.12.2014, ՅՕ-189-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխության համաձայն ժամանակին չվճարված (չգանձված) **պետական տուրքի գումարի նկատմամբ սահմանվել է 0.15 տոկոս տույժի չափ** (նախկին 0.5 տոկոսի փոխարեն)՝ նախատեսելով, որ տույժը կիրառվում է դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Փաստաթուղթ	«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն նկատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.12.2014, ՅՕ-190-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարների մասով վճարների գումարները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում **տույժերը հաշվարկվում են յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0.15 տոկոսի չափով՝ 0,2 տոկոսի փոխարեն:**

Փաստաթուղթ	«Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն նկատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.12.2014, ՅՕ-191-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ ճանապարհային վճարի վճարումն սահմանված ժամկետից ուշացնելու համար տույժերը հաշվարկվում են **յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 0,15 տոկոսի չափով:**

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N1251-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	09.10.2014թ, N 1096-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 56 (1069), 22.10.2014թ
Ուժի մեջ է	01.11.2014թ

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 2010թ. սեպտեմբերի 9-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային և միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի N 1853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի N 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1251-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ տրանսպորտային միջոցը քաղաքացու կողմից հարկադիր էլեկտրոնային աճուրդով կամ սնանկության վարույթի աճուրդով ձեռք բերելու դեպքում՝ տրանսպորտային միջոցի (միջոցների) գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանք չի ներկայացվում: Տվյալ դեպքում տրանսպորտային միջոցի հաշվառման համար հիմք է ընդունվում աճուրդի արձանագրությանը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1364-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	09.10.2014թ, N 1102-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 56 (1069), 22.10.2014թ
Ուժի մեջ է	23.10.2014թ

Համառոտնկարագիր

ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 5-ի «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 1364-Ն որոշման մեջ կատարված լրացումների և փոփոխության համաձայն՝ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգում սահմանվել է տրանսպորտային միջոցներում հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հնարավորությունը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 846-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	09.10.2014թ, N 1103-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 56 (1069), 22.10.2014թ
Ուժի մեջ է	23.10.2014թ

Համառոտնկարագիր

ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի N 1325-Ն ու 2005թ. հունիսի 1-ի N 946-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 846-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ նոր կամ այլ անձանցից ձեռք բերված ՀԴՄ-ն, երբ կիրառվում է միայն որպես հսկիչ-դրամարկղային մեքենա կամ միաժամանակ որպես հսկիչ-դրամարկղային մեքենա և էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր դուրս գրող սարք, գրանցվում է հարկային մարմնի տեղեկատվական բազայում գրանցված՝ գործունեության իրականացման օբյեկտի վրա:

Գործունեության այն օբյեկտներում, որոնք բնակչությանը ծառայությունների մատուցման կամ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված առևտրի օբյեկտ կամ առևտրի իրականացման վայրի վաճառատեղ են հանդիսանում, գրանցված ՀԴՄ-ները կարող են կիրառվել որպես հսկիչ-դրամարկդային մեքենա կամ միաժամանակ որպես հսկիչ-դրամարկդային մեքենա և ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր դուրս գրող սարք: ՀԴՄ-ի աշխատանքային ռեժիմը, միաժամանակ որպես հսկիչ-դրամարկդային մեքենա և որպես ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր դուրս գրող սարք, ապահովվում է հարկային մարմնի տեղեկատվական բազայի ՀԴՄ-ների կառավարման համակարգի միջոցով:

Տրանսպորտային միջոցների մեջ (վրա) տեղադրված ՀԴՄ-ները կարող են կիրառվել միայն որպես ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐ և (կամ) այլ հաշվարկային փաստաթղթեր (բացառությամբ ՀԴՄ կտրոնի) դուրս գրող սարք:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	09.10.2014թ, N 1104-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 56 (1069), 22.10.2014թ
Ուժի մեջ է	23.10.2014թ

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 11-ի «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ, ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐԻ ՃՆԵՐԻ ՍՊԱԳՐՈՒԹՅԱՆ, ԿԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻԳ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐԻ ՃԵՁՔԵՐՄԱՆ, ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐԻ ՍԵՐԻՅԻ և համարի գեներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» N 1504-Ն որոշման մեջ կատարված լրացմամբ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ՍԱԽՄԱՆՎԵԼ Ե ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱՉԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՆԱԿԱՐԱԿՈՒՄ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի N 986 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»
------------	---

	ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23.10.2014թ, N 1212-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (1076), 19.11.2014թ.
Ուժի մեջ է	29.11.2014թ.

Համառոտնկարագիր

ՀՀ կառավարության 2001թ. հոկտեմբերի 17-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 986 որոշմամբ հաստատված՝ բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկման ու վճարման կարգում կատարված լրացումների և փոփոխության համաձայն, սահմանվել է, որ ՀՀ ներմուծված և իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հարկային մարմինները:

Մասնավորապես, որոշման մեջ կատարված փոփոխության մասին սահմանվել է, որ միայն բնապահպանական կամ միայն բնօգտագործման վճարներ վճարող անձինք հաշվարկ-հաշվետվությունները կարող են գրանցման ներկայացնել միայն բնապահպանական մարմիններ կամ միայն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունն: Այսպես, բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարող անձինք մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները՝

ա) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունն գրանցման են ներկայացնում՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ալագան) արտանետելու համար,

- արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար,

- շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և իրացման, ՀՀ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և իրացման համար,

- մակերևութային ջրերի օգտագործման համար,

- ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար,

- կենսապաշարների օգտագործման համար.

բ) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունն գրանցման են ներկայացնում՝

- պինդ օգտակար հանածոների (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների) մարված պաշարների, հանքային ջրերի, աղի արդյունահանված պաշարների համար:

Վերոնշյալ հաշվարկ-հաշվետվությունները նշված ժամկետին հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացվում են հարկային մարմին:

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից համապատասխան վճարի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով ճշտված հաշվարկ-հաշվետվությունները օրենքով սահմանված դեպքերում ներկայացվում են վերոնշյալ կարգով:

Հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնելը պարտադիր չէ ՀՀ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծողների համար՝ բացառությամբ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող-իրացնողների:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2015» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	06.11.2014թ, N 1249-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (1076), 11.2014թ.
Ուժի մեջ է	20.11.2014թ, գործողությունը տարածվում է 30.10.2014թ-ից հետո ծագած հարաբերությունների վրա

Համառոտնկարագիր

Որոշմամբ կիրառության մեջ են դրվում ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի և ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2015» թվագրմամբ «Ծխախոտ» և «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերը:

Սահմանվում է, որ «2011», «2012», «2013» և «2014» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերի առկայության դեպքում ծխախոտի արտադրանք և ալկոհոլային խմիչք արտադրողներին ու ներկրողներին կարող են տրամադրվել նաև «2011», «2012», «2013» և «2014» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշեր:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության Կառավարության հրամարկում արտադրվող և Հայաստանի Հանրապետության ներմուծվող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա տեսածայնային մազնիսական կիրքների դրոշմավորման համար «2015» թվագրամբ հսկիչ նշանները (դրոշմապիտակները) կիրառության մեջ դնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	06.11.2014թ., N 1252-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (1076), 11.2014թ.
Ուժի մեջ է	20.11.2014թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսածայնային մազնիսական կիրքների պարտադիր դրոշմավորման համար կիրառության մեջ են դրվում «2015» թվագրամբ հսկիչ նշանները (դրոշմապիտակները):

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի N1779-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	13.11.2014թ., N 1262-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (1077), 11.2014թ.
Ուժի մեջ է	27.11.2014թ.

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 21-ի «Մաքսային հսկողության իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությանների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 1779-Ն որոշման մեջ կատարված լրացումների համաձայն մաքսային հսկողության իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում ավելացվել է նաև բանկային կամ ապահովագրական կամ վարկային կազմակերպությունների տրամադրած երաշխիքի ներկայացումը հավաստող համապատասխան փաստաթղթերը, ինչ-պես նաև սահմանվել է այն լրացուցիչ տեղեկությանների ցանկը, որը ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրի ճշգրտման նպատակով մաքսային մարմինների կողմից կարող է պահանջվել հայտարարատուից:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի N 902 որոշման մեջ փոփոխության ներառված և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04.12.2014թ, N 1369-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (1081), 12.12.2014թ
Ուժի մեջ է	2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է «Բացթողում ներքին սպառման համար», «Անմաքս առևտուր», «Վերամշակում ներքին սպառման համար», «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» և «Ոչնչացում» մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող բույսերի պաշտպանության միջոցների ցանկը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի օգոստոսի 25-ի N 525 որոշման մեջ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11.12.2014թ, N 1399-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 70 (1083), 19.12.2014թ
Ուժի մեջ է	29.12.2014

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված լրացումների համաձայն սահմանվել է, որ «Ծրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ **առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն և իրականացնող շրջանառության հարկ վճարողների համար** գործունեության այդ տեսակի շրջանակներում ՀՀ ներմուծված ապրանքների մասով ապրանքների ձեռքբերումը հիմնավորող՝ **օտարերկրյա անձանց կողմից սրամադրված փաստաթղթերին ներկայացվող պահանջները համարվում են բավարարված** նաև այն դեպքերում, երբ ապրանքների ձեռքբերման՝

մատակարարի կողմից հաստատված փաստաթղթերում արտացոլված են **մատակարարի անվանումը, փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը**, ինչպես նաև սույն կարգով նախատեսված վավերապայմանները (ակտիվների **անվանացանկն** ու քանակը և (կամ) ծառայությունների տեսակն ու ծավալը, ակտիվների **միավորի գինը**՝ դրա առանձնացումը հնարավոր լինելու դեպքում և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը)՝ անկախ այդ փաստաթղթերի՝ մաքսային մարմնի կողմից կնքված (հաստատված) լինելու հանգամանքից:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 23-ի N 25-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	27.10.2014թ, N 735-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 29 (508), 17.11.2014թ.
Ուժի մեջ է	27.11.2014 և տարածվում է 2014թ. 4-րդ եռամսյակից սկսած հաշվետու ժամանակաշրջանների վրա

Համառոտակարգիչ

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-128-Ն) պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել շրջանառության հարկի հաշվարկի ձևում: Այսպես, հրամանի հավելվածի «Շրջանառության հարկի հաշվարկ»-ի

- 8-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների՝ բացառությամբ 8.1-րդ կետում նշված դեպքերի, դրույքաչափը՝ 1%» (նախկինում՝ «առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ, դրույքաչափը՝ 3.5%»):
- լրացվել է 8.1 կետով՝ «առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ (եթե խախտվել են ապանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջները), դրույքաչափը՝ 5%»

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի փետրվարի 11-ի 51-Ն
------------	---

	հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	31.10.2014թ, N 763-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 29 (508), 17.11.2014թ.
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011թ. փետրվարի 11-ի «Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» N 51-Ն հրամանը:

Փաստաթուղթ	«Աշխատանքային վեճի շրջանակներում ուժի մեջ մտած դատարանի վճիռներով վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձից նպատակային սոցիալական վճարների կատարման վերաբերյալ» ՀՀ Ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	24.10.2014թ, N 3
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 29 (508), 17.11.2014թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանման համաձայն՝

Եթե աշխատանքային վեճերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով գործատուին պարտադրվում է վարձու աշխատողին վճարել աշխատավարձ (այդ թվում՝ հարկադիր պարտաբերողների դիմաց), ապա այդ դեպքում դատարանի վճիռն համապատասխան գործատուի կողմից վարձու աշխատողին վճարման ենթակա աշխատավարձից սոցիալական վճարների գումարները հաշվարկվում և վճարվում են հետևյալ ձևով՝

ա 2014 թվականի հունիսի 1-ից հետո ընկած վիճարկվող ժամանակահատվածի համար հաշվարկված աշխատավարձից կատարվում է սոցիալական վճարի հաշվարկ՝ տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար գործող օրենսդրությանը համապատասխան (այսինքն՝ հաշվի առնելով այդ ժամանակահատվածի համար օրենքով սահմանված դրույքաչափերը և հաշվարկման կարգը)։

բ. հաշվարկված աշխատավարձի և սոցիալական վճարի, ինչպես նաև եկամտային հարկի գումարները արտացոլվում են դատարանի վճիռ օրինական ուժի մեջ մտնելու ամիսը ներառող հաշվետու ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկում որպես տվյալ ամսվա համար հաշվարկված եկամուտ, սոցիալական վճար և եկամտային հարկ։

գ. սոցիալական վճարները ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվում բացված ենթահաշվին (կամ ուրջ հաշվին) վճարվում (փոխանցվում) են այդ ամսվա սոցիալական վճարների համար օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետում:

Փաստաթուղթ	«Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	31.10.2014թ, N 764-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 31 (510) 03.12.2014թ.
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտնկարագիր

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում (ՀՕ-128-Ն) շրջանառության հարկ վճարող համարվելու նոր կարգավորումների համաձայն՝ սույն հրամանով հաստատվել է **շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը:**

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող և միասնական հայտարարություն չներկայացրած հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից որպես ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառումը չեղյալ համարելու մասին դիմումի ձևը սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	31.10.2014թ, N 762-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 31 (510), 01.12.2014թ.
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտնկարագիր

Հրամանով հաստատվել է ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող և միասնական հայտարարություն չներկայացրած հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից որպես ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառումը չեղյալ համարելու մասին դիմումի ձևը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014թ. հունվարի 22-ի N 18-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
Ամսաթիվը և համարը	31.10.2014թ, N 761-Ն
Հրատարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 31 (510), 01.12.2014թ.
Ուժի մեջ է	11.12.2014

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություն է կատարվել ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի ձևում և դրա լրացման կարգում՝ օրենսդրական կարգավորումներին համահունչ:

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

2.1 Այնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.10.2014թ-ից մինչև 20.12.2014թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 5 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 8 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

20.10.2014թ-ից մինչև 20.12.2014թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 97 որոշում, որոնցով բավարարվել է 50, բավարարվել է մասնակի 4, մերժվել է 37, կասեցվել է 5, կարճվել է 1 դիմում-բողոք:

2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ¹

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման	2014թ.
-----	----------	--------	--------

¹ Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

		միավոր	հոկտեմբեր	հոկտեմբեր-հոկտեմբեր	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հոկտեմբեր- հոկտեմբեր) % ²
1	ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկային եկամուտները և պետական տուրք	մլն դրամ	98,778.7	874,969.2	105.9
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	96,361.6	847,002.5	105.3
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	45,809.5	369,657.1	111.0
1.1.2	Ծահուկաբարկ	մլն դրամ	5,759.7	94,151.4	89.7
1.1.3	Եկամտային հարկ ³	մլն դրամ	27,250.5	244,259.6	110.3
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	5,303.8	39,796.0	156.0
1.1.5	Ծրջանառության հարկ	մլն դրամ	1,766.6	13,548.9	125.6
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	486.0	5,610.8	97.8
1.1.7	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	264.9	2,717.6	28.7
1.1.8	Մաքսատուրք	մլն դրամ	4,905.2	41,796.2	107.2

² Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերությունն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ

³ Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները

1.1.9	Այլ հարկային եկամուտներ ⁴	մլն դրամ	4,815.5	35,465.0	64.7
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,417.1	27,966.7	130.8
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	228 301	2 014 372	102.5
2.1	Արտահանում	մլն դրամ	57 321	509 611	102.3
2.2	Ներմուծում	մլն դրամ	170 980	1 504 762	102.6

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ.		
			նոյեմբեր	հունվար-նոյեմբեր	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-նոյեմբեր) % ⁵
1	ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	90,968.8	965,937.9	105.8
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	88,628.7	935,631.1	105.3
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	40,845.9	410,503.0	112.0
1.1.2	Շահույթահարկ	մլն դրամ	7,580.5	101,731.9	89.4

⁴ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջեի հաշվեգրվող), բնապահպանական և բնօգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարգեցված հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, առևտրի հանրահասարակականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների մասով), բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդիների համար քվոտան)

⁵ Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերությունն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ

1.1.3	Եկամտային հարկ ⁶	մլն դրամ	26,356.9	270,616.5	109.0
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	4,546.2	44,342.2	156.3
1.1.5	Ծրջանառության հարկ	մլն դրամ	1,107.3	14,656.2	120.4
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	509.7	6,120.5	98.3
1.1.7	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	253.4	2,971.0	28.7
1.1.8	Մաքսատուրք	մլն դրամ	4,140.7	45,936.9	109.6
1.1.9	Այլ հարկային եկամուտներ ⁷	մլն դրամ	3,288.0	38,753.0	63.2
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,340.1	30,306.8	126.3
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	215 798	2 229 461	101.3
2.1	Արտահանում	մլն դրամ	56 705	566 306	102.5
2.2	Ներմուծում	մլն դրամ	159 093	1 663 156	100.9

⁶ Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները

⁷ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջե հաշվեգրվող), բնապահպանական և բնօգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարգեցված հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաձախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների մասով), բեռնափոխակի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդիների համար քվոտան)

2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ. հոկտեմբեր
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1666
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1344
1.2	Իրավաբանական անձ	հատ	322
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	6 568
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	134
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	2,890.0
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2014թ. հունվար-հոկտեմբեր 15414
5.1	Բավարարված	հատ	1405
5.2	Մերժված	հատ	44
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	10032
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	10.822,0
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	25188
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	500,9

8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2480
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	9.306,6
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	163
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.745,0
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	676
10.1	Ավարտված	հատ	30
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	30
10.3	Կասեցված	հատ	23
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	2.181,9

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ. նոյեմբեր
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1431
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1161
1.2	Իրավաբանական անձ	հատ	270
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	6 021
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից	հատ	109

	վերահսկվող օրենսդրության և առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ		
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերության ներքին և արտասահմանային կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	1,879.6
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում`	հատ	2014թ. հունվար- նոյեմբեր 17158
5.1	Բավարարված	հատ	1461
5.2	Մերժված	հատ	46
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	9804
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	11.622,6
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	25188
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	548,7
8	Չարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2713
8.1	Չարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	9.751,4
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	174
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.829,7

10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում`	հատ	695
10.1	Ավարտված	հատ	29
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	29
10.3	Կասեցված	հատ	25
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	2.458,7